ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«24» փետրվարի 2015թ

ՀՐԱՄԱՆ
№ 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու,<<Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին>> N 1294-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի 14-րդ կետի 8-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև նախարարության համակարգի և նախարարության ենթակայության ներքո գործող հիմնարկների աշխատանքների համակարգման նպատակով.

1) նախարարի տեղակալ Ռուզան Ալավերդյանին՝ համակարգել քաղաքաշինության քաղաքականության և տարածական պլանավորման վարչության, ճարտարապետության վարչության աշխատանքները, ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի և <<Ճարտարապետության Ազգային թանգարան-ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի, ինչպես նաև տարածական պլանավորման և ճարտարապետության ոլորտներում միջազգային ծրագրերի աշխատանքները.

2) նախարարի տեղակալ Արամ Բաղալյանին՝ համակարգել <<Լիցենզավորման կենտրոն>> գործակալության, քաղաքաշինական պետական տեսչության, արտաքին կապերի վարչության, ներքին աուդիտի բաժնի, Եվրասիական տնտեսական միության և ՀՀ կառավարության ու Ազգային ժողովի հետ տարվող աշխատանքները.

3) նախարարի տեղակալ Արմեն Ղուլարյանին՝ համակարգել բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչության, շինարարության քաղաքականության վարչության, ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչության, զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի, ՀՀ մարզերի և աղետի գոտու հետ տարվող աշխատանքները, ինչպես նաև համակարգել <<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն>> բաց բաժնետիրական ընկերության աշխատանքները.

4) նախարարի տեղակալ Հակոբ Բեգլարյանին՝ համակարգել ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի, կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության և նախարարության կողմից իրականացվող գնումների կատարման աշխատանքները:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի տեղակալների միջև աշխատանքները բաշխելու մասին>> № 151-Ա/3 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԵՎՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

<<24>> 2015թ.

ք. Երևան